16676
361
Գ-9

ՀԱՇԻՒ

ԽՆԱՄԱՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՅՈՑ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ՎԵՑ ԳԻՒՂՕՐԼԻՑ ՆՈՐԻՆ

ՎԱՍՆ 1897 ԱՄԻ

ՌՈՍՏՈՎ (Դոնի վերայ)
ՏՊԱՐԱՆ ՑՈՎՀԱՆՆՈՒ ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
1898

361
Գ-93
370
Չ148-ՀԱ

ՀԱՇԻՒ

ԽՆԱՄԱՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳԵԽՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՅՈՑ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

ԵՒ ՇՐՋԱԿԱՑ ՎԵՑ ԳԻՒՂՈՐԷԻՑ ՆՈՐԻՆ

1004
15430
Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԱՍՆ 1897 ԱՄԻ

ՌՈՍՏՈՎ (Դոնի վերայ)
ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
1898

2010

Дозволено Правит. Ростовъ н/Д., тип. И. Теръ-Абраміанъ.

002

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Նոր Նախիջևանի և շրջակայ հայ գիւղօրէից հոգևորականութեան Հոգատար Խնամարկութիւնը այսօր բոլորում է իւր երկրորդ տարեշրջանը։

Վարչութիւնս այսու իրան պարտք է համարում՝ համաձայն կանոնադրութեան մէջ յօդուածոյ՝ ներկայացնել ընդհանուր ժողովի արժանապատիւ անդամոցդ՝ հարց և եղբարց—Խնամարկութեան անցեալ 1897 ամի տարեկան ընդհանուր տեղեկագիրը, պարզելով նոյն տարուայ մէջ արած գործողութիւնները և ցոյց տալով Խնամարկութեանս ամբողջ տարուայ մուտքն ու ելքը։

Վարչութիւնս ամբողջ 1897 ամի ընթացքում ունեցել է լինը վարչական ժողով և գումարել է մէկ ընդհանուր տարեկան ժողով և երեք ընդհանուր արտակարգ ժողով, որոնցից մէկը անդամների որոշեալ թուի պակասութեան պատճառով չէ կայացած։

, Վարչութիւնս՝ իւր առաջի ժողովում ընտրելով գործող անդամներ, այսինքն նախագահ, դանձապահ և գործավար, սկսել է իւր գործունէութիւնը՝ ընդունելով խնդիրներ զանազան անձնաւորութիւններից և չարունակելով ի կատար ածել նախընթաց տարուայ որոշումները։

Համաձայն կանոնադրութեան ԻԴ յօդուածոյ վարչութիւնս անմիջապէս ձեռնարկել է 1896 ամի

«Հաշուի» տպագրութեան, որի մէջ մտնում է և վարչութեան 1896 թուի ընդհանուր ժողովին ներկայացրած տեղեկագիրը և ապա բաժանել է անդամոց։

Վարչութիւնս՝ ասացինք, ընդունել է խնդիրներ զանազան անդամներից և իւր տնօրէնութիւններն է արել. պէտք է նկատել, որ խնդիրներ եղել են երկու տեսակ—ա) խնդիրներ՝ որով ամսական նպաստ են խնդրած կամ միանուագ օգնութիւն, և բ) խնդիրներ՝ փոխարինաբար՝ որոշ ժամանակով և որոշեալ %-ով։

Խնդիրներ ստացուած են հետեւեալ անձնաւորութիւններից՝

1) Մովսէս քհ. Զարիֆեանից. արդ հնգել.

2) Նիկողայոս դպիր Կարապետեանից. հնգել.

3) Այրի Եղիսաբէթ Կարապետեանից.

I. Մովսէս քհնյ Զարիֆեանի խնդիրը վարչութիւնս յանձնել է ընդհանուր ժողովի որոշմանը, որ և իւր 1897 ամի փետրվարի 18-ի ժողովում որոշեց նպաստ տալ յիշեալ քահանային ամսական 15 բուբ., վարչութիւնս համաձայն այդ որոշման մարտի 1-ից սկսեց տուչութիւնը, սակայն դա տեւեց միայն երեք ամիս. Տէր-Մովսէս քահանայի մահով՝ վարչութիւնս դադարեցրեց և նպաստը։

II. Նիկողայոս դպիր Կարապետեանի խնդիրը վարչութիւնս իւր մարտ ամսի 10-ին ունեցած ժողովում՝ հիմնուած նոյն իսկ իրան դարմանող բժշկի ցուցմանց վերայ, մերժեց նորա խնդիրը. որոշելով սակայն աշխատել նորա համար ձրի տեղ գտնել

բժշկուելու Ռոստովու հիւանդանոցում և դեղարանից նոյնպէս ձրի ստանալ դեղերը։

III. Եղիսաբէթ Կարապետեանի խնդիրը, որով այրին՝ իւր ամուսնու մահից յետոյ չատ նեղ վիճակի մէջ մնալով՝ դիմել էր Խնամարկութեանս և ամսական հասոյթ էր խնդրել իւր զաւակների պահպանութեան համար։ Վարչութիւնս իւր հոկտեմբերի 18-ին ունեցած ժողովում որոշեց առաջարկել այդ ընդհանուր ժողովի վճռին, որի համար և ընդհանուր ժողով գումարեց նախ հոկտեմբերի 28-ին և ապա նոյեմբերի 11-ին, ուր ժողովը լսեց ոչ միայն կնոջ վարչութեան ուղղած խնդիրը, այլ և յանուն Վեհափառ Կաթողիկոսին գրած աղերսագիրը, ուր չատ ծանր և անվայել մեղադրանքներ էին բարդուած և անտեղի պահանջներ ուղղուած տեղւոյս հոգևորականութեան դէմ. ուստի ժողովը մերժեց յիշեալ կնոջ խնդիրը։

Վարչութիւնս տարուայ ընթացքում զանազան անդամների խնդիրների համաձայն փոխարինաբար տուել է ընդ ամենայն երեք հարիւր ութսուն (380) բուբ., որ և ստացուած է լրիւ։

Վարչութիւնս իւր գործունէութեան ընթացքում զանազան խնդիրներով է զբաղուել և իւր որոշումներն է արել. իսկ իւր անձեռնհաս եղած դէպքում առաջարկել է ընդհանուր ժողովի խորհրդածութեանը։ Այսպէս՝

ա) Վարչութիւնս՝ տեսնելով, որ Խնամարկութիւնս մշտնջենաւոր անդամութեան համար չունի մի վկայականի դեղեցիկ ձև, որոշեց դիմել պ. Խա-

չատուր Յուսիկեանին՝ խնդրելով աջակցել իրան և ցոյց տալ մի գեղեցիկ վկայականի ձև. սակայն Վարչութիւնս բաւական չհամարելով այսչափ՝ առաջարկեց պ. Յուսիկեանի կազմած ուրուանկարը ընդհանուր ժողովին ի բազմակողմանի խորհրդածութիւն։

բ) Քանի քանիցս հարց է բարձրացած թէ Վարչութեան և թէ ընդհանուր ժողովի մէջ, թէ արդեօք ոչ-հոգևորական՝ սակայն եկեղեցուց օգուտ ստացող և քահանաների հետ չրջադայող սպասաւորները պէտք է վճարեն տարեկան անդամավճարը թէ ոչ։ Այդ հարցը անցեալ նոյեմբեր ամսոյ 11-ին ընդհանուր ժողովը վճռեց դրական կերպով, այսինքն այդպիսիները պարտաւորուած են իրենց անդամավճարը տալու իւրաքանչիւր տարի իբրև նախանձաւոր անդամ։

գ) Վարչութիւնս աշխատել է հաւաքել իւրաքանչիւր անդամից տարեկան անդամավճարը, սակայն նա երբեմն ստիպուել է կրկնել իւր պահանջը առանձին գրութեամբ այդ մասին, բայց զտնուել են անդամներ, որոնց անտարբերութեան պատճառով Վարչութիւնս դժուար կացութեան մէջ է մնացել, ուստի և առաջարկում է ընդհանուր ժողովիդ տալ Վարչութեան մի հրահանգ, թէ ինչպէս վարուի, եթէ այդպիսի դէպքեր պատահին ուրիշ անդամներ ևս։

դ) Վարչութիւնս մինչև այժմ ստացած չլինելով տեղւոյս Եկեղեցական Հոգաբարձութիւնից հանդուցեալ Մկրտիչ Մուրատխանեանի կտակած

տարեկան 25 ռուբ., առանձին գրութեամբ դիմեց յարգոյ Հոգաբարձութեան՝ խնդրելով՝ որ բարեհաճի հասուցանել խնամարկութեանս հասանելիք երկամեայ (1896—97 ամի) յիսուն (50) ռուբ։

ե) Վարչութեանս յանձնուած էր մշակել կանոնադրութեան մի քանի անորոշ կէտերը։ Սա յարմար դատեց յանձնել պ. Գրիգոր Զալխուշեանին կազմել մի նոր կանոնադրութիւն համաձայն մտաց խնամարկութեանս կանոնադրութեանը։ Անցեալ նոյեմբերի 11-ին կայացած ընդհանուր ժողովը նոյն այդ կանոնադրութիւնները յանձնել էր Վարչութեանս արտագրել և բաժանել իւրաքանչիւր եկեղեցւոյ միաբանութեան ի ծանօթութիւն և ի նկատողութիւն։ Վարչութիւնս ժամանակի սղութեան պատճառով տակաւին թողած է այդ գործը անկատար։

զ) Վարչութիւնս իւր տրամադրութեան յանձնուած գումարից ծախսել է վաթսուն հինգ (65) ռուբ., որից 50 ռ. Վարչութիւնս տուել է Նիկողայոս դպ. Կարապետեանի թաղման ծախուց համար, իսկ 15 ռ. տուել է նորա այրւոյն՝ Եղիսաբէթ Կարապետեանին, ի նկատի ունենալով նորա անել և թշուառ վիճակը ծննդեան տօների ժամանակ։

է) Վարչութիւնս իւր վերջին ժողովում քննելով ամբողջ տարուայ հաշուեմատեանը՝ տեսաւ որ ի վերջ դեկտեմբեր ամսոյ 1897 ամի ընդհանուր մուտք եղած է երկու հազար ութ հարիւր քառասուն ինը ռուբ. 19 կոպ. (2849 19), իսկ ելք՝ ութ հարիւր երեսուն երեք ռուբ. 41 կոպ. (833 41)։

Այս ամբողջ 2849 ր. 19 կ. մուտքից հանելով անցեալ 1896 ամի յաւելեալ 1655 ր. 44 կ., այսինքն՝ հիմնական դրամագլուխն և ընթացիկ հաշուով գումարը, այլև 1897 թուի յետ ստացած 200 բուբ. փոխարինաբար տուած փողը, կմնայ զուտ մուտք 993 ր. 75 կ. Ուրեմն առ 1-ն յունուարի սոյն 1898 ամի ընկերութիւնս ունեցել է զուտ մուտք ինը հարիւր ինսունսուն երեք ր. 75 կ. (993 75), որի քառորդ մասը համաձայն կանոնադրութեան 7 յօդուածի պիտի բարձուի հիմնական դրամագլխի վերայ. վերը յիշուած մուտքի մի քառորդ մասը, այն է՝ 248 ր. 44 կ. եթէ աւելացուի հիմնական դրամագլխի վերայ՝ կմնայ ընթացիկ յաւելեալ գումար՝ ամբողջ տարուայ ծախքը հանելուց յետոյ 291 ր. 90 կ., որ անցեալ տարուայ մնացորդ 155 ր. 44 կ. հետ կանէ 447 ր. 34 կ. Արդ վարչութիւնս կըդիմէ ընդհանուր ժողովիդ հայեցողութեանը՝ թէ լաւ չէր՞ լինէր արդեօք փոխանակ մի քառորդ մասին՝ հիմնական դրամագլխին վերայ աւելացուի ամբողջ 500 բուբ., որով զարձեալ ընթացիկ հաշուով վարչութեանս ձեռքը կըմնայ 195 ր. 78 կ.

Վարչութիւնս պարտք կըհամարէ յայտնել՝ որ անցեալ 1897 ամի ընթացքում ունեցել է վեց նախանձաւոր անդամ, որոնցից ստացուած է հարիւր երեսուն (130) բուբ.

ա. Տիկ. Լուսիկ Խալիբեանից ի յիշատակ իւր ամուսնոյն Մինասայ Խալիբեան . . . . . 100 ր.
բ. Իսահակ Մանուկեան Աւաճալեանից 10 ,,

գ. պ. Կարապետ Գէորգեան Խօջայեանից 5 ր.
դ. պ. Կարապետ Թովմաս. Մահտեսեանից 5 ,,
ե. պ. Խաչատուր Խաչ. Մուխալեանից . 5 ,,
զ. պ. Գասպար Մելքոնեան Մաճառեանից 5 ,,

Ընդամէնը 130 ր.

ՊԱՏԿԵՐ

ՄՏԻՑ ԵՒ ԵԼԻՑ ՑԸՆԹԱՑՍ 1897 ԱՄԻ

Հիմնական դրամագլուխ . . .	1500 ր. —
Դրամանոցի մէջ ընթացիկ հաշուով	155 ր. 44 կ.
	1655 ր. 44 կ.

ՄՈՒՏՔ

1) Քաղաքի և գիւղերի եկեղեցիներից	300 ր. —
2) Բոլոր անդամավճարներից . .	381 ,, —
3) Նախանձաւոր անդ. տուրքերը .	130 ,, —
4) Կամաւոր նուէրներ	6 ,, —
5) Պարգևատրութեան հմր. ստացուած	50 ,, —
6) Հիմնական գումարի % . . .	117 ,, 57 կ.
Ընթացիկ հաշիւների % . . .	8 ,, 03 ,,
Փոխարինաբար փողերի % . .	1 ,, 15 ,,
	993 ր. 75 կ.

ԵԼՔ

1) Նիկ. քհյ. Բոսնակեանցին տարեկան նպաստ	300 ր. —
2) Մովսէս քհյ. Զարիֆեանին եռամսեայ նպաստ	45 ,, —

3) Նիկ. դպ. Կարապետեանի թաղման միանուագ . . . . . 50 ր. —
4) Այրի Եղիսաբէթ Կարապետեանցին միանուագ . . . . . 15 ,, —
5) Դիւանական ծախք, հաշուի տպագրութեան, ընդհանուր ժողովների . 43 ,, 41 կ.

453 ր. 41 կ.

Ուստի 993 ր. 75 կոպէկից հանելով 453 ր. 41 կ. առ 1-ն յունուարի 1898 ամի կընթայ յաւելուած 540 ր. 34 կ., որը տարեսկզբին դրամանոց ձգած 1655 ր. 44 կ. վերայ աւելացնելով առ 1-ն յունուարի 1898 ամի խնամարկութիւնս կունենայ երկու հազար հարիւր իննսուն հինգ (2195) ր. 78 կ. Այս ամբողջ գումարը կրբաղկանայ հետեւեալներից՝

1) Հիմնական դրամագլուխ քաղաքային դրամանոցում 3 տարի ժամկով 1500 ր. —
2) Ընթացիկ հաշ. նոյն դրամանոցում 468 ,, 3 կ.
3) Փոխարինաբար տրուած է . . . 180 ,, —
4) Գանձապահի մօտ կայ . . . . 47 ,, 75 կ.

Ընդամենը 2195 ր. 78 կ.

ԿԱՆԽԱՀԱՇԻՒ ՎԱՍՆ 1898 ԱՄԻ

ՄՈՒՏՔ

ա) Անդամավճարներ . . . . . 480 ր.
բ) Եկեղեցիներից . . . . . 300 ,,
գ) Մ. Մուրատխանեանի եռամեայ նպաստը 75 ,,
դ) Հիմնական դրամագլխի % . . . . 78 ,,

933 ր.

ԵԼՔ

ա) Տ. Նիկ. քհյ. Բոսնակեանցին . . . 300 ր.
բ) Անակընկալ ծախուց համար . . . . 100 ,,
գ) Կանոնադրութեան տպագրութեան համ. 50 ,,
դ) Դիւանական եւ այլն ծախուց . . . 50 ,,

500 ր.

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ

1898 ամի փետրուար ամսի 10-ին Կանոնադրութեան III գլ. 9 յօդ. համաձայն՝ Սրբոց Ղեւոնդեանց քահանայից տօնի օրը՝ տեղի ունեցաւ Հոգեւորականաց Հայոց Հոգատար Խնամարկութեան տարեկան ընդհանուր ժողովը Արժանապատիւ Տէր-Յովակիմ ա. ք. Ստեփանոսեանի նախագահութեամբ։

Նախ կարդացուեցաւ Վարչութեան ներկայացրած տեղեկագիրը՝ Խնամարկութեան 1897 ամի գործունէութեան մասին, ուր ընդհանուր ժողովին առաջարկուեցան մի քանի կէտեր Վարչութեան կողմից որոշման համար, այն է՝ նախ երեւեցաւ, որ տարեկան անդամավճարները դժուար են ստացվում, ուստի մի քանի թեր ու դէմ կարծիքներ փոխանակելուց յետոյ՝ ընդունեց հետեւեալ որոշումը. եթէ անդամը մինչեւ դեկտեմբեր ամսոյ 1-ը չտայ, դիմել Հոգեւոր իշխանութեան եւ խնդրել նորա միջամտութիւնը։

բ) Երեւցաւ նոյնպէս, որ անցեալ 1897 ամի տարեկան զուտ մուտքի քառորդ մասը, որ է 248 ր. 44 կ., որ կանոնադրութեան համաձայն պէտք է աւելացնել հիմնական դրամագլխի վերայ, Վարչութիւնը առաջարկեց փոխանակ երկու հարիւր քառասուն ութը (248) ր. 44 կ. աւելացնել հիմնական դրամագլխի վերայ հինգհարիւր (500) ր., ուրեմն աւելացնելով 251 ր. 56 կ., որպէս եւ ընդհանուր ժողովը ընդունեց։

գ) փոխարինաբար տուած փողերի համար թէև ընդհանուր ժողովը որոշել էր 5% առնել, սակայն Տ. Խաչատուր ա. ք. Ջարիֆեանի առաջարկութեամբ ժողովս փոխանակ % առնելու որոշեց օգտուող անդամից կամաւոր նուէր մը առնել։

դ) Ժողովս լսելով այրի Եղիսաբէթ Մկրտչեան Կարապետեանի խնդիրը, որով ամսական նպաստ էր խնդրում խնամարկութիւնից, որոշեց ամսական նպաստ տալ տասը (10) ր. մի տարի ժամանակով՝ սկսած փետրուարի 1-ից. սակայն միւս տարուայ համար ժողովս իրան է վերապահում կրկին խորհրդածութիւն անել այդ խնդրի մասին։

ե) Ընդհանուր ժողովը վերաստուգելով հաշուեմատեանները գտաւ ճիշտ եւ կանոնաւոր վարած, միայն նկատեց, որ մի երկու ամսուայ ընթացքում վերաստուգող անդամները չեն վաւերացրած. ուստի որոշեց, որ ապագայ վարչութիւնը պարտաւորացնէ վերաստուգող անդամներին ամէն ամիս ստուգել մատեանները։ Ընդհանուր ժողովը տեսնելով Վարչութեան անձանձիր աշխատանքը և կանոնաւոր վարած գործերը՝ յայտնեց Վարչութեան իւր խորին շնորհակալութիւնը։

զ) Ժողովս հաստատեց Վարչութեան կազմած 1898 ամի համար կանխահաշիւը։

է) Ժողովս ձեռնարկեց Վարչութեան նոր անդամների ընտրութեանը և ձայների առաւելութեամբ Վարչութեան անդամներ ընտրուեցան հետեւեալ անձինք. Պօղոս ք. Բեդելեանց, Սարգիս ք. Ոսկերչեան, Գէորգ ք. Քէլլէ-Շահինեան, Մկրտիչ ք. Գանձապետեան, Ստեփանոս դպիր Պարտախճեան։

Վերաստուգող յանձնաժողովի անդամներ՝ Մկրտիչ ք. Տէր-Յակոբեան եւ Մարտիրոս ք. Իւզբաշեան։

Նախագահ ընդհանուր ժողովոյ՝

Յովակիմ ա. ք. Ստեփանոսեանց.

Անդամք (Բնօրինակի վերայ ստորագրած են 25 հոգի.)

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԽՆԱՄԱՐԿՈՒԹԵԱՆ

Սարգիս ք. Ոսկերչեան (Նախագահ)
Մկրտիչ ք. Գանձապետեան (Գանձապահ)
Պօղոս ք. Բեդելեան (Գործավար)
Գէորգ ք. Քէլլէ-Շահինեան
Ստեփանոս դպիր Պարտախճեան } Անդամներ.

ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ

Ի ՔԱՂԱՔԻՍ

1. Խաչատուր ա. ք. Զարիֆեան.
2. Յովակիմ ա. ք. Ստեփանոսեան.
3. Յովհաննէս ք. Սաթունեան.
4. Յակոբ ք. Շատուրեան.
5. Սարգիս ք. Մաքսըմաճեան.
6. Սարգիս ք. Ոսկերչեան.
7. Յակոբ ք. Նախաշեան.
8. Մինաս ք. Փախալեան.
9. Մարտիրոս ք. Գանձապետեան.
10. Պետրոս ք. Չոլախեան.
11. Գէորգ ք. Մուշեղեան.
12. Մկրտիչ ք Գանձապետեան.
13. Մարտիրոս ք. Իւզբաշեան.
14. Նիկողայոս ք. Բոռնակեան.
15. Քրիստափոր ք. Թանգայեան.
16. Մինաս ք. Խումաշեան.
17. Սահակ ք. Զարիֆեան.
18. Գէորգ ք. Քէլլէ-Շահինեան.
19. Պօղոս ք. Բեդելեան.
20. Մկրտիչ ք. Տէր-Յակոբեան.
21. Սիմէօն սարկաւագ Մարմարեան.
22. Գաբրիէլ կիսասարկ. Պատկանեան.
23. Առաքել ,, Նուրբէկեան.
24. Նիկողայոս դպիր Տէր-Սարգսեան.
25. Մարգար ,, Տէր-Սարգսեան.
26. Յովակիմ ,, Մխիթարեան.
27. Ստեփանոս ,, Պարտախճեան.
28. Գաբրիէլ ,, Ջախմախեան.
29. Պետրոս ,, Ձափխընեան.
30. Գասպար ,, Խալիմեան.
31. Գէորգ ,, Թերզեան.

Ի ԳԻՒՂՕՐԱՅՍ

ՄԵԾ-ՍԱԼԱ

32. Ալեքսիանոս ք. Զօրայեան.
33. Յովակիմ ք. Շոռլուեան.
34. Արսէն ք. Տօմբայեան.

ՓՈՔՐ-ՍԱԼԱ

35. Գէորգ ք. Խաճեան.
36. Գաբրիէլ դպիր Թոփալեան.

ՉԱԼԹՐ

37. Յովհաննէս ք. Քրիստոստուրեան.
38. Խաչատուր ք. Բաղդասարեան.
39. Գրիգոր ք. Պարտախճեան.
40. Թէոդոս դպիր Պարտախճեան.

ԿԱՑԵՐԻՆԱՒԱՆ

41. Անանիա ք. Փիրալեան.

ԹՈՓԹԻ

42. Գաբրիէլ ք. Տէր-Աբրահամեան.
43. Միքայէլ ք. Տէր-Միքայէլեան.
44. Բարսեղ ք. Նահապետեան.
45. Էմմանուէլ ք. Հաճիեան.

ՆԻՍՎԻԹԱ

46. Սարգիս ք. Մարտիրոսեան.

ԱՆՈՒԱՆՔ ԲԱՐԵՐԱՐԱՑ ԵՒ ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐԱՑ

1. Մկրտիչ Թորոսեան Մուրատխանեանց (հանգ.) Բարերար.
2. Մինաս Ալեքսանեան Խալիբեանց (հանգ.) Մշտնջենաւոր.

ՆԱԽԱՆՁԱՒՈՐՔ

1. Իսահակ Մանուկեան Ալաճալեան.
2. Միքայէլ Աստուածատրեան Խոմաճեան
3. Կարապետ Յովհաննէսեան Զախարեան.

2013